այլ Թարգմանիչք այսպիսիք ո՛չ, և ոչ երբեք այսօր սրբազան հետք նորա ։ Նա յամենայնի յայտնիկ ունին սոքա առանձինն քաջութիւնս, ունին և միաբան աննախանձ նահատակութի՛, դժուարին և ՚ի սուրբս անգամ ։

Նոյեն ապա ՚ի մասին ինչ բարեացս հաւաստարեալ սոցա կամ թէ առաւելեալ՝ այլոց ոմանց ՚ի հինս և ՚ի նորս, ՚ի քաղաքագէտս և հայրենասէրս, յիմաստունս և ՚ի սուրբս. այլ միահամուռ լրութեամբ այսքանեօք որ ՚ի սոսա փայլեն բարեմասնութեամբք՝ ախոյեանս դիմակալս սոցա յարուցանել, կարծեմ նմա միայն է կարելի, որ ճանաչէն և զտուրս շնորհաց իւրոց և զջանս ընդունողացն և զպտուղս ջանացողացն ։ Որով և ինձ ՚ի սպառել բանիցս որ առ բարձրութի՛ ձեր նկրտէր, ո՛վ վեհք ՚ի հանդիսարանս Հայոց, իմաստունք և սուրբ Թարգմանիչք, զայս միայն լիցի վասն ձեր գոչել ընդ Առաքելոյ, եթէ " Ո մի ՚ի նոցանէ ոչ արժէ աշխարհս համօրէն ,, ։

Հ. Ղ. Մ

Ա.

Մէկ մի կայ որ հազար արժէ,
Հազար կայ որ մէկ մի չարժէ,
Ու այն մէկն որ հազար արժէ,
Մօտ յանգէտըն փող մի չարժէ ։

Բ.

Յանհաւատ մարդոյ ՚ի զատ կաց ու հեռի,
Թէ քեզ հայր է կամ եղբայր և կամ որդի.
Հետ վերջին մի տալ ու առնուլ զինչ հետ ուռի,
Թէ չէ՝ ՚ի ձեռնըդ բռնուի, և քեզ մեծ կսկիծ լինի ։

ՈՍԿԻՓՈՐԻԿ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Հացածառ կամ Հացապտուղ[1] ։

ԻՆՈՒՍՈՑ մէջ խիստ օգտակար ու գեղեցիկ ծառերէն մէկն ալ ասիկայ է. ու կը գտնուի Ասիոյ հարաւային կողմերը, և մանաւանդ Ովկիանիայի կղզիներուն մէջ. տեղացիք աս ծառը կը հոգան կը մեծցընեն, ու պտուղը հացի տեղ կ'ուտեն ։

Ծառին բարձրութիւնը միջակ է, տեսքը աղուոր, գլուխը կլոր, ճիւղերը կարճ ու դէպ ՚ի վար ծռած, տերևները սիրուն կանանչ ու ճղքռտած ։ Ճիւղերուն վերի ծայրերը հինգ վեց տերևէ ձևացած փունջ մը կայ, անոր մէջ կը բացուի ծաղիկը ։

Պտուղը կլոր ու քիչ մը հաւկթաձև է՝ տղու գլխու չափ. կեղևը հաստ, խորտուբորտ ու կանանչ, և հասունցած ատենը կը դեղնի. միջուկը առաջ ճերմակ կ'ըլլայ, ետքը կը դեղնի, և ասիկայ է որ հացի տեղ կ'ուտուի ։

Հինգ վեց տեսակէն աւելի է հացածառը. և ասոնք իրենց ձևովն ու մեծութեամբը իրարմէ քիչ շատ կը տարբերին, բայց ամէնն ալ տաք երկիրներու մէջ միայն առաջ կուգան ։ Մէկ տեսակը կայ որ պտուղները խիստ խոշոր են, այնպէս որ մէկ հատը մէկ մարդ հազիւ կրնայ վերցընել ։

Մալապարի ծովեզերքը մէկ տեսակը կայ որ կեղևէն թել մը կ'ելլէ, և տեղացիք անկէ բարակ կտաւ կը գործեն. փայտը տուն և նաւակ շինելու կը գործածեն, բունէն ալ խէժ մը կ'ելլէ որ այլ և այլ բաներու կը գործածուի ։

Ընդհանրապէս հացածառին պտուղը քիչ մը կանկառի ու շագանա-

1 Լա. յունական բառով Artocarpus, որ հացապտուղ կը նշանակէ ։



Հացածառին պտուղը։

կի համ ունի կ'ըսեն, և սովորաբար կ'եփեն ու այնպէս կ'ուտեն։ Դայի-թի կղզիներուն մէջ խիստ շատ կայ, տարին ութը ամիս պտուղ կուտայ, և այնչափ ատենի մէջ միայն իրեք հատ հացածառի պտուղները մէկ հոգւոյ մը կը բաւեն։ Ովկիանիայի բնակիչները նոյն պտղին միջուկը խմորի պէս կը շաղուեն, ամիսներով կը պահեն իրենց պաշար, ու չաւրուիր։

Վաթսուն տարի մը կայ որ Անգղիացիք աս ծառը շատ ծախքով տարին նաև Անթիլեան կղզիները տընկեցին։

Ուր որ չափազանցութիւնը կը սկսի, առաքինութիւնը հոն կը վերջանայ։

ՄԱՍԻԼԻՈՆ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Կաթի ու պանրի վրայ տեղեկութիւն։

ՁԻՈՒ, իշու, կովու, այծու և ոչխարի կաթը՝ պէտք եղած ատենը կրնան մէկմէկու տեղ բռնել՝ թէ սնունդ տալու և թէ դեղի համար։ Ամէն տեղ տեսնուած ու փորձուած է որ երբեմն մեր մը կաթը կը պակսի՝ կովու, այծու ու մաքիի կաթով կը սնուցանեն կաթնկեր տղան. գայլի ձագը ոչխարի կաթով կը մեծցընեն, նոյնպէս կատուի ու շան ձագերուն վրայ փորձուած է՝ որ մէկը մէկալին մօրը կաթը ծծելով կը սնանին։ Այս կաթերը հարկաւ մէկմէկէ տարբերութիւն պիտի ունենան և մէկմէկէ գերազանց պիտի ըլլան. բայց դեռ չգիտցուիր թէ աս տարբերութիւնները որչափ են։ Այծու և իշու կաթերը թէպէտ կուրծք